



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2018թ. դեկտեմբերի 7

N 140

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ “ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Նորմատիվ իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ի հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, “Բաժնետիրական ընկերությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի “ա” ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի 2018 թվականի նոյեմբերի 16-ի N 1187 գրությունը **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2007 թվականի հուլիսի 31-ի “Ապարանի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին” N46-Ա որոշման 6-րդ կետով հաստատված կանոնադրության 1.7. կետի “Գ.Նժդեհի 30” բառերը և թիվը փոխարինել “Գարեգին Նժդեհի փողոց թիվ 21” բառերով և թվով:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի “Ապարանի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում իրականացնել փոփոխված կանոնադրության պետական գրանցումը:
3. Սույն որոշման պահանջների կատարման ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Արտեմ Պետրոսյանին:

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գի Նիշան



ՄԱՐԶՊԵՏԱՆԻ ԱԹԱՆԵՅԱՆ